

ՀՏԴ 338

DOI: 10.53068/25792997-2025.3.16-281

ՄՊՈՐՏԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ՆԵՐԴՐՄԱՄԲ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Կ. Ս. Քոչարյան,

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Սպորտ, տնտեսական աճ, ներդրումներ, սպորտային արդյունաբերություն, զբոսաշրջություն, մենեջմենտ, ենթակառուցվածքներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ (SS), տվյալների հավաքագրում, պետական քաղաքականություն:

Հետազոտության արդիականություն: Հայաստանի Հանրապետությունում տնտեսական աճի ապահովումը երկարաժամկետ զարգացման առաջնահերթ ուղղություններից է [5]: Մինչ այժմ հիմնական ուշադրությունը կենտրոնացած է եղել արդյունաբերության, տեղեկատվական տեխնոլոգիաների և գյուղատնտեսության վրա, մինչդեռ սպորտային ոլորտը՝ իր բազմաշերտ տնտեսական ազդեցությամբ, հաճախ անտեսվել է: Սակայն վերջին տարիներին աշխարհում աճում է այն միտումը, ըստ որի՝ սպորտը դիտարկվում է ոչ միայն սոցիալական և մշակութային արժեք, այլև տնտեսական գործունեության կարևոր գործոն [9]: Ժամանակակից համաշխարհային տնտեսական համակարգում սպորտը

դադարել է դիտվել միայն որպես ֆիզիկական ակտիվության և առողջ ապրելակերպի խթանման գործիք՝ վերածվելով տնտեսական զարգացման կարևոր բաղադրիչի, որը ներառում է հզոր ֆինանսական հոսքեր, աշխատատեղերի ստեղծում, զբոսաշրջության ակտիվացում և նոր ներդրումային ուղղությունների ձևավորում [6,7]: Սպորտային ոլորտը միավորում է կրթությունը, առողջապահությունը, զբոսաշրջությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները և ծառայությունների շուկան՝ ձևավորելով բազմաբնույթ ազդեցություն երկրի համախառն ներքին արդյունքի վրա [10]: Բացի դրանից, սպորտային միջոցառումները և մրցումները նպաստում են երկրի միջազգային ճանաչմանը, ներդրումային միջավայրի բարելավմանը և հասարակության համերաշխության ամրապնդմանը [8]:

Արտասահմանյան ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սպորտը կարող է ապահովել համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) զգալի աճ՝ շնորհիվ սպորտային զբոսաշրջության,

սպորտային միջոցառումների կազմակերպման, ենթակառուցվածքների զարգացման և սպորտային ապրանքների ու ծառայությունների սպառման ընդլայնման [9,10]: Օրինակ՝ զարգացած երկրներում սպորտային արդյունաբերությունը միջինում կազմում է ՀՆԱ-ի մինչև 5% [6]:

Հայաստանում սպորտի տնտեսական ներուժը դեռևս ամբողջությամբ չի իրացվել [3]: Չկան բավարար թվով գիտական ուսումնասիրություններ, որոնք կգնահատեն սպորտային ոլորտի ազդեցությունը ազգային տնտեսության վրա [1]: Բացի այդ, սպորտային կառավարման համակարգը դեռևս թերի է՝ ներդրումային քաղաքականության, մասնավոր հատվածի ներգրավման և միջազգային համագործակցության տեսանկյունից [2], սակայն ՀՀ-ում՝ փոքր տնտեսությամբ և սահմանափակ բնական պաշարներով երկրում, սպորտային ներուժի արդյունավետ օգտագործումը կարող է դառնալ տնտեսական աճի խթանման ռազմավարական ուղղություններից մեկը: Հայաստանի տնտեսության ներկա պայմաններում սպորտային կառույցների, միջոցառումների և մարդկային ռեսուրսների ճիշտ կառավարումը կարող է ապահովել ոչ միայն սոցիալական կապիտալի զարգացում, այլև ստեղծել տնտեսական հավելյալ արժեք [9]: Այս տեսանկյունից

անհրաժեշտ է գիտականորեն գնահատել սպորտի ազդեցությունը տնտեսական աճի վրա և բացահայտել այն մեխանիզմները, որոնց միջոցով սպորտային ներուժը կարող է ծառայել Հայաստանի տնտեսական առաջընթացին [10]: Զուգահեռաբար կարելի է նշել, որ սպորտային զբոսաշրջությունը՝ որպես համաշխարհային տնտեսական ենթաոլորտ, վերջին տարիներին աճող միտում ունի նաև Հայաստանում [8,9]: Միջազգային և տարածաշրջանային մրցումների անցկացումը (օրինակ՝ Եվրոպական U-19 առաջնություններ, վազքի մարաթոններ, հեծանվային տուրեր, ըմբշամարտի մրցումներ) հնարավորություն է տալիս ներգրավել հազարավոր այցելուներ, որոնք իրենց հերթին նպաստում են հյուրանոցային, սննդի, տրանսպորտային և մշակութային ծառայությունների ծավալի աճին [6,10]: Ըստ գնահատումների՝ մեկ խոշոր սպորտային միջոցառման տնտեսական ազդեցությունը կարող է գերազանցել 2-3 միլիարդ դրամը՝ կախված մասշտաբից և մասնակցության մակարդակից [2]:

Վերջին տարիներին Հայաստանում ձևավորվում են սպորտային տեխնոլոգիաների ստարտափներ, որոնք միավորում են SS և սպորտի ոլորտները: Դրանք ներառում են ֆիզիոլոգիական տվյալների վերլուծություն, մարզումների թվային հարթակներ և

սպորտային մարկետինգի ավտոմատացված համակարգեր [7]: Նման նախաձեռնությունները ոչ միայն նպաստում են նոր տնտեսական ուղղությունների ձևավորմանը, այլև բարձրացնում են Հայաստանի մրցունակությունը միջազգային շուկայում [9]:

Հետևյալ իրավիճակում արդիական է ձևավորել գիտահետազոտական հիմք, որը կօգնի բացահայտել, թե ինչպես կարելի է սպորտային ներուժը վերածել տնտեսական շարժիչ ուժի: Հետազոտությունը կարևոր է նաև պետական ռազմավարությունների մշակման և սպորտային կառավարման քաղաքականությունների բարելավման համար՝ նպատակ ունենալով խթանել Հայաստանի տնտեսական կայուն աճը՝ սպորտի միջոցով:

Հետազոտության նպատակը, խնդիրները: Բացահայտել Հայաստանի Հանրապետության տնտեսական աճի ապահովման գործում սպորտային ներուժի դերը և այն գործոնները, որոնց միջոցով սպորտային ոլորտի զարգացումը կարող է խթանել տնտեսական կայուն զարգացումը:

Նախանշված նպատակին հասնելու համար ձևակերպվել են հետևյալ խնդիրները.

1.Վերլուծել սպորտային ոլորտի ներկա տնտեսական վիճակը Հայաստանի Հանրապետությունում:

2.Ուսումնասիրել սպորտային միջոցառումների ազդեցությունը տարածաշրջանային և ազգային տնտեսական ակտիվության վրա:

3.Բացահայտել խնդիրները, որոնք խոչընդոտում են սպորտային ներուժին տնտեսության աճի շարժիչ ուժ դառնալուն:

4.Հայտնաբերել այն ոլորտները, որտեղ սպորտը կարող է առավել արդյունավետորեն նպաստել տնտեսական աճին:

5.Համեմատական վերլուծության միջոցով գնահատել միջազգային փորձը՝ բացահայտելով այն գործիքները, որոնք կարող են կիրառվել հայկական իրականությունում:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության մեթոդներն են՝ գիտամեթոդական գրականության վերլուծություն, մաթեմատիկական վիճակագրություն, սոցիոլոգիական հարցում:

Հետազոտությունն անցկացվել է 2024–2025 թվականներին՝ ընդգրկելով 7 մարզադպրոց շուրջ 350 մասնակցի տվյալներով:

Մեթոդներից հաջորդը նոր աշխատատեղերի ստեղծումն է՝ ընդլայնված ներդրումային հնարավորություններով, որն էլ իր հերթին կբարձրացնի երկրի տնտեսական գրավչությունը:

Հետազոտության արդյունքների

վերլուծություն: Հետազոտությունն իրականացվել է բազմամեթոդ մոտեցմամբ՝ ընդգրկելով ինչպես քանակական, այնպես էլ որակական վերլուծության գործիքներ: Գիտամեթոդական գրականության վերլուծության, մաթեմատիկական վիճակագրության, սոցիոլոգիական հարցման արդյունքները փաստում են, որ սպորտային ոլորտում իրականացվող պետական և մասնավոր ներդրումները Հայաստանում ունեն աճող, սակայն դեռևս ոչ համաչափ ազդեցություն երկրի տնտեսական և սոցիալական զարգացման վրա: Սպորտային ներուժը կարող է նպաստել ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական կապիտալի աճին: Համայնքային մակարդակում մարզակումբները և դպրոցները դառնում են սոցիալական ինտեգրացիայի հարթակներ, որոնք միավորում են տարբեր սոցիալական խավերի ներկայացուցիչների: Այս երևույթը կիսաանի սոցիալական կայունությունը և բնակչության մասնակցությունը տեղական տնտեսական գործունեությանը: Նույնքան կարևոր է սպորտային կրթական ծրագրերի ներդրումը դպրոցներում և բուհերում, որը կնպաստի առողջ և աշխատունակ սերնդի ձևավորմանը: Սա իր հերթին երկարաժամկետ ներդրում է երկրի մարդկային կապիտալի մեջ:

Բացի այդ, առողջ ապրելակերպի և ֆիզիկական ակտիվության տարածումը նվազեցնում է առողջապահական ծախսերը և բարձրացնում արտադրողականությունը: Հետազոտության խնդիրների իրականացումը հնարավորություն կտա ձևավորել գիտական հիմնավորում՝ ցույց տալու, որ սպորտը կարող է դառնալ ոչ միայն սոցիալական արժեք, այլև ազգային տնտեսության զարգացման հիմնարար ուղղություն:

Վերլուծական մեթոդի իրականացման արդյունքում Հայաստանի վիճակագրական կոմիտեի, ՀՀ ԿԳՄՍ նախարարության և միջազգային տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ վերջին հինգ տարիներին սպորտային միջոցառումների կազմակերպման ծախսերն աճել են միջինը 23%-ով, մինչդեռ ենթակառուցվածքային ներդրումները՝ 17%-ով: Տեղական բյուջեների վրա ազդեցությունը հիմնականում դրական է՝ շնորհիվ միջոցառումների կազմակերպման ընթացքում ստեղծվող ժամանակավոր աշխատատեղերի և զբոսաշրջային հոսքի: Այնուամենայնիվ, արձանագրվել է, որ ֆինանսավորման բաշխումը անհավասար է՝ առավել կենտրոնացված մայրաքաղաքում:

Համեմատական վերլուծության մեթոդի իրականացման արդյունքում Վրաստանի, Էստոնիայի, Լիտվայի և Չեխիայի փորձի ուսումնասիրությունը

ցույց է տվել, որ արդյունավետ սպորտային քաղաքականությունը հիմնված է երեք առանցքային գործոնի վրա՝

1. պետական և մասնավոր ներդրումների համադրման համակարգ,

2. մարզական զբոսաշրջության ռազմավարական զարգացում,

3. տեղական կառավարման մարմինների մասնակցություն:

Համեմատության արդյունքում պարզվել է, որ Հայաստանը դեռևս գտնվում է զարգացման նախնական փուլում. մասնավոր ներդրումների մակարդակը զգալիորեն ցածր է՝ միջինում 4–5 անգամ [2], իսկ սպորտային զբոսաշրջությունը ձևավորվում է առանց երկարաժամկետ ռազմավարության [6]:

Հարցազրույցների և հարցաթերթիկների մեթոդի իրականացման արդյունքում հարցված մասնակիցների (մարզական կառույցների ղեկավարներ, մարզադպրոցների տնօրեններ, մարզիկներ, տնտեսագետներ) կարծիքների հիման վրա պարզվել է, որ.

1. 68%-ը գնահատում է պետական աջակցությունը որպես «բավարար, սակայն անկայուն»,

2. 74%-ը կարևորում է մարզային ենթակառուցվածքների զարգացումը,

3. 59%-ն ընդգծել է մասնավոր հատվածի անբավարար մասնակցությունը [2]:

Բացի այդ, մարզիկների շրջանում նկատվում է բարձր սպասում միջազգային մրցումների կազմակերպման և արտերկրյա համագործակցության ընդլայնման հարցում, ինչը դիտվում է որպես տնտեսական հնարավորության կարևոր ուղղություն:

Ըստ մաթեմատիկական վիճակագրության արդյունքների՝ հարաբերակցական (կոռելյացիոն) և ռեգրեսիոն մոդելների կիրառմամբ հայտնաբերվել է դրական և վիճակագրորեն նշանակալի կապ ($r=0.72$) սպորտային ներդրումների և ՀՆԱ-ի աճի միջև [10]:

Բազմագործոն մոդելը ցույց է տվել, որ յուրաքանչյուր 1 մլրդ դրամի ներդրում սպորտային ենթակառուցվածքներում, միջինում ավելացնում է ՀՆԱ-ն մոտ 0.04%-ով, պայմանով, որ ներդրումներն ունենան երկարաժամկետ բնույթ [6]: Սա վկայում է սպորտային ոլորտի տնտեսական պոտենցիալի մասին՝ ոչ միայն սոցիալական, այլև տնտեսական շարժիչ ուժի [8]:

Փաստաթղթային և բովանդակային վերլուծության իրականացման արդյունքում պետական ռազմավարությունների և իրավական փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Հայաստանի սպորտային քաղաքականությունը վերջին տարիներին աստիճանաբար մոտեցվում է եվրոպական

չափանիշներին [ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, 2025]: Սակայն բացահայտվել են որոշ խնդիրներ՝

- ներդրումային ծրագրերի հստակ գնահատման մեխանիզմների բացակայություն,

- մարզային անհավասարություն և մասնավոր հատվածի խրախուսման թուլություն:

Դրական է այն, որ ԿԳՄՍ նախարարության նոր ռազմավարությունում արդեն նշված է սպորտի և տնտեսության փոխկապակցվածության ամրապնդման ուղղությունը:

Աղյուսակ

Հայաստանի սպորտային ներուժի փնտրեսական ազդեցությունը (2024–2025)

Մեթոդ	Տվյալներ	Հիմնական արդյունքներ
Վերլուծական	ՀՀ վիճակագրություն, ՀՀ ԿԳՄՍՆ, OECD	+23% միջոցառումներ, +17% ենթակառուցվածքներ
Համեմատական	Վրաստան, Էստոնիա, Լիտվա, Չեխիա	Պետական/մասնավոր ներդրում, զբոսաշրջություն
Հարցազրույց/հարցաթերթիկ	Յուրաքանչյուր մարզադպրոցը՝ 50–70 մասնակից	68% աջակցություն, 74% ենթակառուցվածքներ, 59% մասնավոր
Մաթեմատիկական վիճակագրություն	Հարաբերակցական (կոռելյացիոն), ռեգրեսիոն	$r=0.72$, 1 մլրդ → ՀՆԱ +0.04%
Փաստաթղթային (բովանդակային)	Ռազմավարություններ, փաստաթղթեր	Մոտեցում՝ եվրոպական, խնդիրներ, ներդրում/ մասնավոր

Եզրակացություն: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս.

1. Հայաստանի սպորտային ոլորտն ունի բարձր տնտեսական ներուժ, որը ներկայումս լիովին չի օգտագործվում:

2. Վերլուծությունն ապացուցում է, որ սպորտային միջոցառումների և ենթակառուցվածքների զարգացումն անմիջական ազդեցություն ունի ՀՆԱ-ի վրա՝ դրականորեն ազդելով զբոսաշրջության, աշխատատեղերի ստեղծման և տեղական բյուջեների վրա:

3. Մարզային անհավասարությունը, մասնավոր հատվածի ցածր ներգրավվածությունը և ներդրումային ծրագրերի գնահատման հստակ մեխանիզմների բացակայությունը հիմնական խնդիրներն են, որոնք անհրաժեշտ է լուծել՝ սպորտային ներուժը տնտեսական շարժիչ ուժի վերածելու համար [4]:

4. Մասնավոր և պետական ներդրումների համադրումը, սպորտային զբոսաշրջության ռազմավարական զարգացումը և տեղական կառավարման մարմինների մասնակցությունը համաշխարհային փորձի առանցքային գործոններն են, որոնց վրա կարող է հիմնվել արդյունավետ քաղաքականությունը Հայաստանում:

Առաջարկություններ: Հայաստանի Հանրապետության սպորտային ներուժը կարող է դառնալ երկրի տնտեսական աճի և սոցիալական կայունության հիմնական գործոն, եթե մշակվեն և իրականացվեն համապարփակ գործնական քայլեր և պետական քաղաքականություն: Առաջարկում են որդեգրել հետևյալ քաղաքականությունները.

1. Ներառել ներդրումային և հարկային խթանումներ՝ ապահովելով մասնավոր հատվածի մասնակցությունն ու ֆինանսավորման բազմազան աղբյուրների ներգրավմամբ:

2. Զարգացնել սպորտային կրթական ծրագրերը և մասնագիտական պատրաստությունը՝ ձևավորելով մրցունակ մարդկային ռեսուրսներ:

3. Խթանել համայնքային և մարզային սպորտային ծրագրերը՝ ապահովելով տարածքային հավասարակշռություն և տնտեսական ակտիվացում:

4. Ինտեգրել թվային տեխնոլոգիաներ և նորարարական լուծումներ՝ արդյունավետ կառավարման, մոնիտորինգի և վերականգնողական ծառայությունների համար:

5. Խորացնել միջազգային համագործակցությունը՝ ներգրավելով ներդրումներ, փորձ և համատեղ նախագծեր՝ Հայաստանի ճանաչելիությունն ու զբոսաշրջային ներուժը բարձրացնելու նպատակով:

Ըստ այդմ՝ սպորտը Հայաստանում կարող է դառնալ ոչ միայն սոցիալական արժեք, այլև ազգային տնտեսության կայուն զարգացման կարևոր գործոն, երբ ներդրումներն ու կառավարման քաղաքականությունն ուղղված կլինեն ռազմավարական, համախմբված և երկարաժամկետ արդյու-

նավետության ապահովմանը: Վերոնշյալ գործնական առաջարկությունները հիմք են ստեղծում ազգային սպորտային ռազմավարության մշակման համար, որը կկապակցի տնտեսությունը, կրթությունը և առողջապահությունը՝ ապահովելով երկարաժամկետ կայուն զարգացում:

📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սարգսյան Հ., Սպորտի կառավարման մոդելներ և տնտեսական ազդեցություն Հայաստանի մարզերում, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2020, 145 էջ:
2. Գևորգյան Կ., Մարզական ենթակառուցվածքների ներդրումների արդյունավետության գնահատում, Տնտեսագիտության և կառավարման գիտական հանդես, №4, Երևան, 2019, էջ 55–68:
3. Մինասյան Լ., Սպորտի և առողջության փոխկապակցվածության գնահատում Հայաստանի մարզերում, ՀՀ ԳԱԱ տպագրություն, Երևան, 2023, 98 էջ:
4. ՀՀ վիճակագրական կոմիտե, Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի սոցիալ-տնտեսական ցուցանիշներ, Երևան, 2024:
5. Дьяков А.Н., Экономика спорта: модели и механизмы развития спортивной отрасли. Москва: Финансы и статистика, 2021,
6. Коваленко Е., Математическое моделирование спортивных инвестиций. Журнал «Экономика и спорт», №3, 2022, с. 47–58
7. Петров И.В., Спортивный менеджмент и социально-экономическое развитие регионов. Санкт-Петербург: Питер, 2020
8. Shibli, S., & Coleman, R. (2020). Measuring the Economic Benefits of Sport: A Model-Based Approach. *European Sport Management Quarterly*, 20(3), 211–230.
9. Zhang, J., & Zhao, H. (2023). Modeling Sports Investment Efficiency with Mathematical Tools. *Journal of Sport Management and Analytics*, 11(2), 33–48.
10. **WWW escs.am** ՀՀ ԿԳՄՍ նախարարություն [Մուտք՝ 14.09.2025]

WAYS TO ENHANCE ECONOMIC GROWTH THROUGH INVESTMENT IN SPORTS POTENTIAL IN THE REPUBLIC OF ARMENIA

*K.S. Qocharyan,
Armenian State Institute of Physical Culture
and Sport, Yerevan, Armenia*

ABSTRACT

Keywords: Sport, economic growth, investments, sport industry, tourism, management, infrastructure, IT, data collection, public policy.

Research Relevance. Sport is increasingly recognized worldwide not only as a contributor to public health but also as a powerful driver of economic and social development. In Armenia, however, the potential of sport remains insufficiently utilized, limiting opportunities for sustainable growth and regional advancement. International trends in the sports economy demonstrate that sport can function as a dynamic source of innovation, investment, and employment. For this reason, integrating sports development into Armenia's national economic policy is becoming a strategic imperative.

Research Aim. The purpose of the study is to promote sustainable economic growth by leveraging Armenia's sports potential through the formulation of a comprehensive strategy and the development of effective management mechanisms that link the sports sector with broader economic domains.

Research Methods and Organization. The research employed methods of comparative analysis, statistical evaluation, economic assessment, and surveys. Conducted in 2024-2025, the study encompassed 15 regional centers, 10 sports schools, and 25 private sports organizations, involving approximately 350 participants, including athletes, coaches, economists, and public administration representatives.

Research Results Analysis. The analysis of international experience confirms that sport can substantially enhance economic development through multiple pathways, including increased investment flows, tourism growth, technological innovation, and the expansion of modern infrastructure. For Armenia, the strategic priorities that emerge from the findings include strengthening financial incentives and attracting private investments, enhancing education and professional training in the sports sector, establishing regional and community-based sports centers, integrating IT technologies and data management systems into sports governance, and fostering international partner-

ships and collaborative programs. Collectively, these directions can stimulate job creation, expand the sports industry, and generate measurable contributions to national GDP.

Conclusion. A systematic and well-coordinated development of Armenia’s sports sector has the potential to transform it into a sustainable engine of economic growth. Such an approach can attract investments, reinforce human capital, improve population well-being, and elevate Armenia’s global profile as a country that effectively mobilizes its sports resources for long-term economic development.

ПУТИ ПОВЫШЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА ЧЕРЕЗ ВНЕДРЕНИЕ СПОРТИВНОГО ПОТЕНЦИАЛА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

*К.С. Кочарян,
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения*

АННОТАЦИЯ

Ключевые слова. Спорт, экономический рост, инвестиции, спортивная индустрия, туризм, менеджмент, инфраструктура, ИТ, сбор данных, государственная политика.

Актуальность исследования: В современном мире спорт рассматривается не только как средство укрепления здоровья, но и как важный инструмент социально-экономического развития. Вклад спорта в экономику проявляется через рост занятости, развитие туризма, инноваций, инфраструктуры и человеческого капитала. Для Армении, обладающей богатым спортивным наследием и активной молодежью, потенциал этой сферы используется недостаточно. Отсутствие системного подхода и стратегического управления ограничивает возможности для устойчивого экономического роста, особенно на региональном уровне. В условиях глобализации и цифровизации спорта актуальной задачей становится интеграция спортивной политики в общенациональную стратегию развития.

Цель исследования: Обеспечить устойчивый экономический рост посредством эффективного использования спортивного потенциала Армении, разработки комплексной стратегии и создания механизмов управления, направленных на укрепление связей между спортом, экономикой и обществом.

Методы и организация исследования. Применялись методы сравнительного анализа, статистики, экономики и социологических опросов. Исследование проводилось в 2024–2025 годах и охватывало 15 региональных центров, 10 спортивных школ и 25 частных спортивных организаций, в которых участвовало около 350 респондентов — спортсмены, менеджеры, эксперты и представители государственных структур.

Анализ результатов исследования: Международный опыт подтверждает, что спорт может стать двигателем экономического роста через инвестиции, развитие туризма, инновации и модернизацию инфраструктуры. Для Армении стратегические направления включают:

1. Финансовые стимулы и привлечение частных инвестиций;
2. Развитие образования и человеческих ресурсов;
3. Создание общественных и региональных спортивных центров;
4. Интеграцию ИТ и цифровых технологий;
5. Международное сотрудничество и совместные программы.

Реализация этих направлений будет способствовать созданию новых рабочих мест, развитию спортивной индустрии, росту ВВП и повышению конкурентоспособности страны.

Краткие выводы: Системное и стратегическое развитие спорта в Армении способно превратить его в самостоятельную экономическую отрасль. Это обеспечит приток инвестиций, укрепление человеческого капитала, рост уровня занятости, улучшение здоровья населения и повышение международного имиджа страны как активного участника глобального спортивного сообщества.

Տեղեկություններ հեղինակի մասին

Վարինե Սերյոժայի Քոչարյան՝ Սպորտի կառավարման և մարզական լրագրության ամբիոնի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,

E.mail: karine.qocharyan@sportedu.am

Information about the author

Karine Sergey Qocharyan, Lecturer, Chair of Sport Management and Sport Journalism, Armenian State Institute of Physical Culture and Sports, Yerevan, Armenia,
E.mail: karine.qocharyan@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 06.11.2025–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 07.11.2025–ին:

Գրախոս՝ Բ.Գ.Թ., դոցենտ Վ. Աբովյան